

պանողականներ — չարաչար կը սխալէր իր հաշիւներուն մէջ: Վազըը դիւրութեամբ գիտնաթափուողը չէր: Ոչ ալ վհատողն ու չէզոքացողը:

Նա նորէն կրկէսի մէջ է, որպէս օրագրող, հրապարակախօս: Գրիչը նոյնքան սուր, հատու եւ թունտ, որքան լեզուն: Կլէմանսօ-հոնտորը համբաւաւոր է: Ժօնէան անգամ յուզումով ու զգուշութիւններով կը մօտենար ու կը չափուէր անոր հետ: Երկու մեծ Փրանսացիները մղեր են երկար բանակիւններ այլեւայլ հրատապ խնդիրներու շուրջ: Երկուքն ալ զմայլելի էին, իբրեւ զրիչ, իբրեւ արուեստ, իբրեւ գիտութիւն ու տրամաբանութիւն: Կեանքի հոյակապ փիլիսոփաներ՝ օժտուած հարուստ փորձառութեամբ, մշակոյթով ու մտապաշարով: 900-ական թուականներն էին, Ժօնէս-Կլէմանսօ գաղափարային մենամարտը կը կատարէր ողջ հանրային ուշադրութիւնը: Դրժուար էր որոշել թէ ո՞վ կը ստանար առաջնութեան արժանեանք: Անտարակոյս, երկու մեծագոյն հրապարակագիրներն էին Փրանսայի: Տարբեր՝ խոնուածքով, ոճով, մեթոտով: Մէկը պողպատէ սլաքներ կը նետէր, թունտ ու հեզնոտ, դիմելով ստէպ գաւռօշային ժեսթերու ad hominem դատողութիւններու, սրախօսութեան ու խճրճանքի: Միւսը — Ժօնէս — երբեք չէր շեղեր իր վեհո՞գի, առարկայապաշտ մեթոտէն եւ կը ձգտէր զինաթափ ընել հակառակորդը լոկ ճշմարտութեան զէնքերով, կը գրէր լայն, ներդաշնակ, ռիթմային պարբերութիւններով, միշտ վերասլաց ու քնարաշունչ, զերծ մարդկային վատ կիրքերու անդրադարձումներէ:

Զիրար, սակայն, կը յարգէին: Օր մը նոյնիսկ Կլէմանսօ հրապարակաւ դրուատեց Ժօնէսի խօսական կարողութիւնները, ինչպէս որ ըմբիչ մը կը պանծացնէ իր ախոյեանը՝ զինքը աւելի բարձրացնելու միտումով ... Ի վերջոյ, սակայն, գժտուեցան: Կլէմանսօ սկսեց հալածել ընկերվարական պարագլուխը, ինչպէս հալածեր էր բոլոր հզօրները ... Բայց երբ գուժեցին Ժօնէսի մահը, ամենէն յուզիչ ներքողականներէն մէկը Կլէմանսոյի ձեռքով գըրուեցաւ:

Ժօնէս այսօր կը հանդէի Համազգային Սրբատաճարին մէջ (պանթէօն), ուր պիտի փոխադրուէր անտարակոյս եւ Կլէմանսօ, եթէ չլինէր իր կտակը: Բայց պատմութիւնը, հաւանականօրէն, տարբեր ձեւով պիտի գնահատէ Փրանսական ճակատագրի երկու մեծ դարերիները: Մէկը՝ Կլէմանսօ՝ իր ամբողջ կեանքը ծնրադրեց միայն հայրենիքի խորանին առջեւ. Փրանսա՝ ամէն տեղ եւ ամէն ժամանակ, Փրանսա՝ ամէն բանէ վեր, Փրանսայէն դուրս — թէկուզ ջրհեղեղ*) ... Չէր նստեր իր գլխուն մէջ միջազգայնութեան հաւատամքը եւ մինչեւ վերջ կը ծաղրէր Ազգերու Դաշնակցութիւնը ...

Միւսը՝ Ժօնէս լինելով հանդերձ նոյնպէս ջերմօրէն հայրենասէր, կը ներշնչուէր Փրանսական Մեծ Յեղափոխութեան՝ այն հոյակապ նշանաբաններէն, որոնք հայրենիքի նեղ սահմաններէն ելնելով, մարդկութեան ու մարդկայնութեան իտէպլը փողահարեցին, տիեզերական եղբայրութիւն քարոզեցին, բոլոր ազգերու ազատութիւնն ու բարօրութիւնը պատգամեցին ...

* * *

Պարլամենտական կրկէսէն դուրս նետուելով, Ժօրժ Կլէմանսօ ապաւինեցաւ իր գրչին: Եւ մեծատաղանդ հրապարակախօսին առջեւ շուտով բացուեցաւ գաղափարային նոր ուղի:

*) Հիպերբօլիկ ոճ մըն է, անշուշտ. բայց իրաւ է, որ ուրիշ ազգերու ճակատագիրը, բարգաւաճումը կամ անկումը կարծես թէ շատ ալ չէր մտահոգեր Վազըը, բացի գուցէ Գերմանիայէն, որու լիակատար անկումն ու ոչընչացումը նա կը բաղձար եւ կը կոչէր սրտի խորերէն՝ նեղ, վայրենի ազգայնամոլութեան իր ահարկու խոյանքներուն մէջ: Մինչեւ վերջին շունչ, անգամ իր մահուան հանգրուանէն, նա անդադար չանթեր կը տեղար «Բօլշերուն» դէմ ... Երբեք չէր ըսեր «գերմանացի», միշտ «Բօլ» արհամարհոտ եւ անարգական բառով կը կոչէր ահազին ազգ մը, որ իր կարծիքով, ամբողջովին վայրագ, գիշատիչ հորդա մըն էր, ամբողջովին պատասխանատու պատերազմի չարիքներուն համար — ազգ մը, որ տուեր է մարդկութեանը մտքի եւ արուեստի անհասանելի տիտաններ ...